

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի, կես տարվան 6 ռուբլի.
Առանձին համարները 5 կոպեկով.

Թիֆլիսում գրվում են միմյանի խմբագրատան մէջ.

Մեր հասցեն. Тифлисъ, Редакция „Мшакъ“.
Կամ Tiflis, Rédaction „Mschak“.
Տէլէֆոն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերէն)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Յայտարարութիւնները համար վճարում են
խրաքանչիւր լստին 2 կոպեկով.
Տէլէֆոն № 253.

ՀԻՄՆԱԳԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲԱՑՎԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ՆԵՐԿԱՅ 1898 ԹԱՎԱՆԻ

ՄՇԱԿ

(26-րդ ՏԱՐԻ)

ԴՐԱՎԱՆԱԿԱՆ ԵՒ ՔՍԱՆՎԵՏԵՐՈՐԴ ԼՐԱԿԻԻ

ՓԵՏՐՎԱՐԻՑ ՄՇԱԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՎՈՒՄ Է ԱՄԵՆ ՕՐ ԲԱՑԻ ՏՕՆ ԵՒ ՏՕՆԵՐԻՆ ՅԱԶՈՐԻ

«ՄՇԱԿԻ» տարեկան գինը թէ Ռուսաստանում և թէ արտասահմանում 10 ռուբլի է, տասն և մէկ և տասն ամսականը՝ 9 ռ., ինն և ութ ամսականը՝ 8 ռ., եօթ ամսականը՝ 7 ռ., վեց ամսականը՝ 6 ռ., հինգ ամսականը՝ 5 ռ., չորս ամսականը՝ 4 ռ., երեք ամսականը՝ 3 ռ., երկու ամսականը՝ 2 ռ., մի ամսականը՝ 1 ռուբլի:

«ՄՇԱԿԻ» գրվել կարելի է ՌԵԴԱԿՏԱՆԸ (Բաղրամյան և Բարձրակայա փողոցների անկիւն):
Կայտարարութեան ուրիշ քաղաքներէն «ՄՇԱԿԻ» գրվելու համար, և առհասարակ նամակներ և ծրարներ ուղարկելիս, պէտք է դիմել հետեւեալ հասցեով. ТИФЛИСЪ, редакция „МШАКЪ“, իսկ արտասահմանից՝ TIFLIS, Rédaction du journal arménien „MSCHAK“.

Յայտարարութիւններ ընդունվում են թէ հայերէն, թէ ռուսերէն և թէ օտար լեզուներով:
Բառեր վճարվում է 2 կոպեկով:

ԲՈՎԱՆԳԱԿՈՒԹԻՒՆ

Անօգուտ հայածանք.—ՆԵՐԿԱՅ ՏԵՍՈՒԹԻՒՆ.
Երկրագործութեան միջոցառումներն մի ծրարից են ծնունդ առնում: Հայոց ներկայացուցիչները Բագուում. Նամակ հուշույց. Նամակներ խմբագրութեան. Նամակ խմբագրութեան. Ներքին լուրեր. —ԱՐՏԱԲԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Վերջին տեղեկութիւններ. Նամակ թղթաբանից. Նամակ Պարսկաստանից. Արտաքին լուրեր. —ԽՈՒՆ ԼՈՐԵՐ. —ՀԵՆՈՒՆՆԵՐ. —ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ. —ԲԱՆԱՍԻՐՎԱՆ. Մէլքի աղջիկը:

ԱՆՕԳՈՒՑ ՀԱՎԱԾԱՆԻ

Այն վէճերը, որոնք տեղի ունեցան Թիֆլիսի քաղաքային ընտրութիւնների, զեմստօ մտցնելու, աւագանիների դէմ մատուցած, այսինքն իրենց հաստատութեան և ուրիշ բանաւորութիւ խնդիրների առիթով, երևան հայտեցին մի շատ անմիջական երևոյթ, որ գոյութիւն ունի Կովկասի ազգաբնակչութեան ղեկավար շրջանների մէջ: Դա՛ կղզիացած, ետական դիրքն է, որ արտայայտվում է դէպի այն գործերը, որոնք վերաբերում են երկրի բնագոյնի զարգացման խնդրին: Վրացիները, թուրքերը, նոյն իսկ հայերը և ուրիշ ազգութիւններ և զանազան խմբեր չեն ուզում հասկանալ, որ բոլորի առաջ դրած է համակեցութեան, փոխադարձ գործակցութեան մեծ խնդիրը և ուրեմն անկարելի է այն կամ այն ազգութեան, այս կամ այն խմբի մասնաւոր խմբագրութիւն:

ՄԵԼԻՔԻ ԱՂԶԻԿԸ

Ձիւր մտղում էր անդադար: Ձիւրները մեծ փափախները, թաւառաղ ետփոխվում էր արդէն սպիտակել էին: Ճանապարհը միշտ դէպի բարձր էր գնում, ուրվելով խոր ձորերի շուրջը: Մերձակայ բարձրութիւններից ձիւնախառն քամին յաճախ յարձակումներ էր գործում դէպի ճանապարհը. երբեմն նա այնքան սաստիկ էր և այնքան շատ ձիւն էր թափում, որ ձիւնները կանգ էին առնում, կուգ գալիս. չորս կողմում ամեն ինչ կոչում էր մի մառախուղի մէջ, որ պտույտներ էր գործում, ուռնում էր, հեծեծում: Թուշող ձիւնը բերաւոր մանր սանդիկներ նման ծակուտում էր հեծանքներին, չը նայելով որ նրանք ծածկում էին իրանց դէմքերը, աւելի պինդ փաթկնվելով ետփոխվումների մէջ: Անցնում էր բուրբ, ձմռանային օրը պարզում էր իր դէմքը, գալիս էր համառարած լուսնիւնը, որի միակ տեղերը ազդանքներ էին. երբեմն նրանք խմբերով թռչում էին ճանապարհի վրայով, արմկերով սառած օդը իրանց թևերի խշշոցներով, իսկ երբեմն ձորերի խորքից դուրս էին գալիս նրանց խմբա-

նների տեսակէտից նայել քաղաքացիական զարգացման գործին: Կովկասում դեռ տիրում է այն սխալ կարծիքը, որ մի ազգութիւն կարող է առաջադիմել, երբ նրա հետ միասին ապրող հարեանը լեռնադիմում է: Գտնվում են մարզիկ, որ կարծում են թէ հայը կարող է զարգացած, լուսաւոր կենք ունենալ այն ժամանակ, երբ նրա հետ կենակցող թուրքը, վրացին, քիւրդը, լոյնը ամենեւին չեն փոխում իրանց կենքը դէպի լաւ, կամ վրացին կարող է երջանիկ կենք ստեղծել, եթէ հայը և թուրքը ճնշված և նեղված լինեն: Այն փոքրիկ փորձերն անգամ, որ գոյութիւն ունեն այժմ երկրի բազմաթիւ քաղաքային դուռներում՝ ցոյց են տալիս, որ մեր քաղաքները չեն կարողանում զգալի առաջադիմութիւն անել գլխաւորապէս այն պատճառով, որ քաղաքային ձայնաւորները և ձայնաւորներին ընտրող քաղաքացիները միատեսակ զարգացած չեն, միատեսակ չեն ըմբռնում քաղաքի շահերը: Թուրք աւագակը մեր գաւառում ոչ միայն վնասում է իր ազգի զարգացման, այլ և նրա հարեան հայ գեղացուն և վաճառականին: Հայ կամ թուրք վաշխառուն ոչ միայն վնասում է ուրիշ ազգութեան, այլ և իր հարազատ ազգութեան...

Այս մտքերը շատ են տարրական, շատ անգամ են կրկնված, բայց կենքի մէջ գործադրութիւն չեն գտնում: Եւ որ աւելի ցաւալի է և անմիջական, այդ

կան կոչույցները: Ձիւնները նորից շարժվում էին, մինչև ծնկները խրվելով քամու դիմաց ձիւնա-կոյտերի մէջ: Ճանապարհը շատ դժուար էր, բայց ճանապարհորդներին չէր կարող յուսահատեցնել մի այսպիսի եղանակ:

Քամու մի զօրեղ յարձակումից յետոյ, մէկը, որ գնում էր առջից, ձեռքը մեկնեց դէպի աջ, դէպի ձորի միւս կողմում ընկած դառնալը և ասաց.

—Հէքն, պառ ուտողը...

Հայրապետը նայեց ցոյց տուած ուղղութեամբ: Զառկվայի գլխին, ծմակի ծառերի մէջ, սկին էր տալիս մի ինչ որ խոշոր առաքիլայ:

Պառ ուտող կոչվում է այն արջը, որ ձմեռը դուրս է գալիս իր որջից: Հայրապետը լաւ տընդեղեղուց յետոյ պատասխանեց, որ մէկը սխալվում է... Բայց մէկը համոզված էր, որ սե առաքիլան ուրիշ բան լինել չէ կարող: Հայրապետը հակառակ էր պնդում: Ինքը շատ լաւ է տեսնում, առաքիլան անշարժ է, երեւի մի սե քար է, որի վրա եղած ձիւնը սրբել է քամին:

—Մի անգամ էլ այս կողմերում մի պառ ուտող պատահեց մեզ: Կարծեմ հէնց այստեղ էր, այսպիսի մի օր: Յիշում ես...

Հայրապետի յիշողութիւնը կարճ էր, իսկ այդ դէպքի վրայով քամու և հինգ տարիներ էին անցել: Մէկը մանրամասնութիւններ պատմեց: Այն ժամանակ այս իսկ ճանապարհով դէպի Սպի-

այն է, որ նոյն իսկ Եւրոպայի ամենալուսաւոր կենտրոններից, Վիեննայից և մինչև իսկ Պարիզից բարձրաձայն հնչում են ազգային ազգութեան, թշնամութեան և հալածանքի աղաղակներ, մի տեղ դէպի չէին, միւս տեղ դէպի հրէաները... Այդպիսի աղաղակներ շատ անգամ են լրացած պատմութեան ընթացքում, սակայն պատմական փորձը մինչև այժմ էլ չը խրատեց շատ ազգերին, և մեր ազգայն սերունդները նոյնպէս պետք է կարմրեն մեր գործերի համար, ինչպէս այժմեան սերունդները կարմրել են իրանց նախորդների սխալների համար: Ընթացիկ կրքերի և մասնաւոր հաշիւների ազդեցութեան տակ մարդիկ լուզվում են և թող տալիս իրանց զազանային յարձակումներ և հալածանքներ միմեանց դէմ, որոնք իրանց ետեւից թողնում են միմիայն տխուր և ծանր հետեւանքներ...

Կովկասը մասնաւոր պէտք է զգուշանայ ազգայնական նեղ գաղափարներ լարեցանելուց, որովհետեւ նա ազգութիւնների մի անօրինակ խառնուրդ, և ազգաբնակչան մի այնպիսի բարդ թանգարան է ներկայացնում, որտեղ կարող է առաջադիմութիւն լինել միայն այն դէպքում, երբ բոլորը համակված կը լինեն ընդհանուր քաղաքացիական և հասարակական իդէալներով: Դա, եթէ չստանք գաղափարական, առնուազն խելացիութեան պահանջն է:

ՆԵՐԿԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԵՐԿԱՐԳՈՐԾՈՒԹԵԱՆ ՄԻՆԻՍՏՐՈՒԹԵԱՆ ՄԻ ՏՐԱԳԻՐԸ

Երկրագործութեան և պետական կառուածների միջնաբերդներն մէջ ներկայ փետրվարին կը կազմէին մի յատուկ յանձնաժողով, Անդրկովկասի ընդի ազգաբնակչութեան հողային կազմակերպութեան վերաբերեալ օրէնսդրութիւնը քննելու համար: Ինչպէս հաղորդում են Պետերբուրգի լրագրողները, յանձնաժողովը պէտք է կայացնի իր նիստերը մինչև 15 փետրվարին: Նախագահութեամբ և նրա գործընկերների պէտք է մասնակցեն, ի թիւս այլոց, նաև Տիլեկով և Սեզլովսկի, որոնք շատ մօտ ծանօթ են այդ խնդրին: Ծանախաժողովի քննութեան ենթակայ հարցերի մէջ գլխաւոր տեղը բռնելու է թափառական կամ թարաբանայ կոչված ցեղերի հողային կազմակերպութեան հարցը:

Ինչպէս յայտնի է, մեր երկրի հողագործական և նոյն իսկ անտեսական ու կուլտուրական դար-

գացման նշանաւոր արեւելքներից մէկն էլ կիսանքի այն եղանակն է, որ վարում են բազմաթիւ թուրք և քիւրդ խաչնարած ցեղեր, այն է թափառական կենսակերպ: Այդ ցեղերը մշտապէս մի տեղ չեն բնակւում, ամառը նրանք, վերջնական իրանց բնակարանը, հօտերը, վրանները՝ բարձրաւում են լեռնային տեղերը, սարերի լանդշերը և այնտեղ ապրում են մինչև աշունը, երբ կամաց-կամաց ցած են իջնում և երկար թափառում են իրենց ու աստանդական կենսակերպ յետոյ, ձմեռը կանգ են առնում տաք հովիտներում և ապրում են հողակոյտ որջերում կամ դարձեալ վրաններում: Սակայն այդ տեղերում նրանք գրաւած ունեն տանտակ հաղարաւոր դեռեալներ հողեր, որ նրանք համարում են իրանց սեփականութիւնը, չեն հեղուկ, չեն մշակում, այլ այնտեղ արածացնում են միայն իրանց հօտերը, երամակները և խաչնեղերը:

Թափառական և անդործ կենսակերպ պատճառով, անդրկովկասեան թուրք և քիւրդ ցեղերը չեն չլիւծում ոչ մի կուլտուրական տարրի հետ, հազարակցութիւն չեն ունենում հաստատարական ազգաբնակչութեան հետ: Նրանց մատաղ սերունդը դպրոցի երես չէ տեսնում և մեծանում ու դարգանում է իր ցեղի բոլոր անտախապաշտութիւնների, նախապաշարականների և վայրենի հակումների ու սովորութիւնների մէջ: Եւ մինչ երկրի օտար, մշտաբնակ ցեղերը զարգանում, առաջադիմում են անտեսապէս, բարոյապէս և մտաւորապէս, աստանդական և թափառող ցեղերը մնում են իրանց նախնի նախապետական, կիսապայքի միջակի մէջ: հողերի աւազին տարածութիւն մնում է անմշակ, անխմամ: առաջակութիւնները, տաւարի գոգութիւնները, հրկիւղութիւն և արեան վրէժնադրութեան դէպքերը չեն պակասում և այդպիսով երկրի անտեսական ու կուլտուրական կանոնաւոր դարգացումը շատ դանդաղ է առաջ ընթանում:

Այդ չարիքին պէտք է վերջ դնել. կառավարութիւնը վաղուց ձգտում է այդ նպատակին, բայց որովհետեւ խորքը շատ հին է, շատ խորն է թափանցել կենսային մէջ, ուստի և ձեռնարկելի միջոցներ պէտք է արմատական լինեն և ոչ պալլիատիվ: Ձեռք կարծում սակայն, և շատ կասկածում ենք, որ յանձնաժողովի ծրագրած միջոցը կարողանայ հասնել այդ նպատակին, այն է իրական միջոց գտնել չարիքը արմատախիլ ա-նելու համար: Ինչպէս երևում է, յանձնաժողովին ենթադրութիւն ունի առաջարկել, որ աստանդական և կիսապայքի թուրք և քիւրդ ցեղերին ոչ մի հողային սեփականութիւն չը տրվի, այլ նրանց ձեռքից լսվում այն հողերը, որ այժմ գտնվում են նրանց ձեռքում և մնում են անմշակ ու անխմամ: Ընդհակառակն, մենք կարծում ենք, որ ամենաիրական միջոցը կը լինէր՝ ստիպել

ընդ էր. բայց նրա դեռապաշտութեան բուն նպատակը ուրիշ էր, մի սուրբ գործ...

Մէլքիները իմաստորեցին նրան Գանձակի մօտ, մի փոքրիկ գիւղում: Մուկը վրա հասաւ, ամենքը բոլորվեցին գիւղական օջախի շուրջը, թէ՛ կրակի առաջ, և այդտեղ, կովերի ու հորթերի որոճոցի մէջ, ծխով լցված տան յարկի տակ, առաջին անգամ հնչեց մեծ աւետիլը. Կարաբաղի համար լուսանում էր աղաւտութեան օրը... Ինքը, Օրին, զիչ էր խօսում. նրա փոխարէն՝ օջախի շուրջը հաւաքված մարդկանց հիացում էր Մինաս վարդապետը, որ ուղեկցում էր նրան մինչև Արաքս: Մինաս վարդապետը արդէն սուրբի հռչակ էր ստացել ժողովրդի մէջ. և ուրիշ անուն չէր տալ ժողովուրդը մի մարդու, որ շրջել էր Եւրոպայում, թագաւորների և իշխանների ուշադրութիւնը հրաւիրելով արեւելքում տանջվող ժողովրդականների վրա: Հայրենիքի սէրը վառել էր այդ երկու մարդկանց, նրանք տեսնում էին, որ յարմար ժամանակն է և ոչինչ ջանք չէին խնայում: Այժմ նրանք առում էին, որ դուր չը կորան տարիները աշխատութիւնները: Ժողովրդի ձայնը տեղ հասաւ. մասնաւորապէս անիծած լուծի տակ խելոված քրիստոնեաներին հիւսիսի մեծ թագաւորը ուղարկում էր ազատութեան յոյս: Թող ոտքի կանգնեն ամենքը, եկել է ժամը, երբ Քրիստոսի խաչը պիտի ապառով դարաւոր անարգութիւնից...

այդ ցեղերին վարել հաստատարական կեանք, ինչպէս Անդրկովկասի միւս ցեղերը—հայերը, վրացիները, սոսիական նրանց պարսպել հողագործութեամբ, այդպիսով իրենց և գիւղատնտեսութեան ալ ճիւղերով: Իսկ դրա համար անհրաժեշտ է, որ նրանք ունենան հող:

ՏՅՈՒՌ ՄՏԱՅՄՈՒՆՔՆԵՐ
(Նոսակ գաւառէն)

Ձմեռ է: Վաղուց արդէն գիւղացին գերանդին մարդն է, պարկն մէջ հագցնել և պատից կանել: Հաշիւ է տեսնել նաեւ իր հոգեհան հրեշտակի՝ վաշխաւուի հետ, մի կերպ «թուղթը թագացնել են»: զինով է հարկաւոր պաշարով. եթէ նշանադրութիւն, պսակ կայ՝ պատրաստութիւն է և տեսել: Սակայն այդ բոլորը չէ, որ ամիսները դործ չէ: Աշնանային գործերի հետ կատարվում են և դրանք, ապա գալիս է գիւղացու կեանքի անգործանելութեան պերեօդը՝ ձմեռը, մի երկար ժամանակամիջոց, որի ընթացքում Վոլկայի գիւղացիները, շատ քիչ բացառութեամբ, կատարելով անգործութեան են մտնում:

Ինչ է անում այդ մուսացված դասակարգը: Այդ հարցի պատասխանը մամուլի քրօնիկը լափոնական ուժով այսպէս է ձևակերպում. «արտիկները իրանց աւազակութիւնների ծրագիրներն են կատարելագործում, գործնականապէս փորձեր են անում և իրանց գործած ուժերն են դուրս բերում աւելցնում. վրացիները դուրս են պատուում որքան կարելի է զարհուրելի, եղբրական դարձնել իրանց սպանութիւնները. հայերը միացած ուժով՝ կարողանալով զինվորներ բարեկեցութեան շարժանքներու շնորհ են դրած դեռ, սրա նրա այդու ծառերը, տնկիները կոտորում և այլն: Բայց սրանք դեռ թուղթի տեղեկութիւններ են: Հարկաւոր է մտնել դրանց խրճիթները, դուրս օղաները՝ գիւղական այդ կուրծքերը, ծանոթանալ և աչքով տեսնել նրանց անցրած կեանքը՝ համոզվելու համար, թէ ինչպիսի բարոյական վատագի է եղել արկած գիւղական մատուղ սեւընայր, ինչպէս բարոյապէս փլանում են գիւղի «շահիթները», և կամ ինչպիսի լպիւր խօսքեր լրանելու է դատապարտված ամօթխած գիւղիկներ: Եւ այդ բոլորը անգործութեան շնորհիւ, որը մի առիթով չարիքի նման կրծում է գիւղական հասարակութեան առանց այն էլ խարխուլ կեանքի արմատը: Եւ իրարից, ինչ չարիքներ ասէք չեն ծնում այդպիսի, ինչ ճիւղերում մտնում են իրենց աչք չեն տեսնում և զարգանում գիւղական այդ, բայց երկուսին, անարատ ազգաբնակչութեան մէջ:

Ինչ է արված այդ հասարակութեան համար, ոչինչ: Անանքի անիւր իր սովորական ընթացքով առաջ է դնում: Մտնողներն, գաղափարներն ծառայել խօսքերը այժմ միայն փայլել են առաջացնում, այնքան են մարդիկ հեռացել իրականից: Օրէնքը կրկնված երկուստեքների թիւը շատանում է, իսկ դրա հետ հաւասարապէս կորուստեան անհրաժեշտ է մոտենում այն ժողովուրդը, որը դրանց ծնել է: Ամեն կողմից մուսացված այդ դասակարգը թաւանում, չարանում է՝ ու այդ բոլորից յետոյ մենք դեռ չարանակում ենք հրճել, երբ կարողանանք լրացնել նրան: Այնպիսի հեռավորները թէ այս ինչը մագիստրոսութեան աստիճանն ստացաւ, այն ինչը բժշկապետութեան անոյ գիւղերուցիս պաշտպանեց և

Այս գիւղերն անցել էր, բայց օջախի մօտ չէր լուռ վարդապետի կրակում խօսքը: Այդ գիւղեր միայն ծառերն էին կարող անտառները մնալ, իսկ մէլքները չէր ճնշել, տարիների յոյսը մարմնացել էր, կանգնել նրանց առաջ: Ինչ քուն պիտի փակել աչքը, թող չը տար, որ նա տեսնէ այդ հրաշալի մանուկը, որ իր ճարտար ու քաղցր լեզուով ասում էր. «Ժամանակ է... Լարաբաղը դեռ երբեք չէր ընդունել երկու պատգամաբերների նման օրհնված հիւրեր: Եւ նա լայն բաց արւա իր սիրտը, չէր թողնէ որ նրանք չուտ հեռանան: Տօնախմբութիւնները ընդհանուր էին, բոլոր հինգ գաւառները մի սիրտ, մի հոգի էին դառնել, եղբայրութիւն էր ամեն տեղ, չէր կար պալ ևս խորութիւն, չէր կային «իմ և քո» խօսքերը: Արդար և հաւասար լինելու համար մէլքները վճռեցին, որ հիւրերը իւրաքանչիւրի տանը մնան երեք օր: Մի օր էլ յատկացրին Գանձատարին: Մերձիկ Եսայի կաթողիկոսը հանդիսաւոր պատարագ մատուցեց, իսկ հրաժեշտի ժամանակ համարովեց ամենքին հետ, բաց եղաւ, չէր կարողացաւ խօսք արտասանել: Ժողովուրդը չէր գիտէր ամեն ինչ: Օրիկ դեպքանութիւնը գաղափար էր, բայց մէլքները ծանօթ էին նրա ծրագրերին, երկար խորհրդակցութիւններ էին անում: Այլ ևս անհարկն ըսն չէր կար նրանց համար, յոյսը թեւեր է տալիս մարդուն, և Լարաբաղի տեղերը հաստատ խոստում տուին, որ քան հազար զին-

այն: Ավանայ յիշում ենք բանաստեղծի խօսքերը. «Բայց թէ ուսումը...»

Ռ. Յովհաննիսեան

ՀԱՅՈՑ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄՆԵՐԻ ԲԱՅԻՌՈՒՄ

«Կենսաբան», ինչպէս և «Մտաբան», որը պ. Պատարագում միայնակ է գրել, գաղափարական գործածք է: Հեղինակը գեղարուեստի միջոցով ձեռնարկում է արթնացնել հասարակական միտքը, վերականգնողական գեղեցիկ հասանքները, որոնք այնքան կարճ ժամանակ փայլեցին և այնպէս աւարագ թուլացան միջավայրի շնորհիւ: Այդ դարհուրելի միջավայրի վարագոյրը այս անգամ բացվում է մի այնպիսի կողմից, որը համեմատաբար ազատ պիտի լինէր կեանքի տեղիք և ապակապ շնորհ ֆակտորներից, այն է գիտնական աշխարհը: Պէտք է լինէր... Բայց այլ է իրողութիւնը: «Անանք» ցույց է տալիս, որ գիտութիւնը և ընկել է անարժան ձեռքեր, որոնք նայում են նրա վրա իրեն շահաւէտ արհեստի վրա: Այստեղ դուռ գիտութիւնով ոգևորված գաղափարական մարդը ոչ պակաս տրագիկական դրութեան մէջ է, քան թէ հասարակական գործիչը, եթէ նա միայն ճշմարտութիւն է ցանկանում և իր փափագ չունի ծառ. ճանապարհներով ամբարցնել իր դրութիւնը, կամ չէ ցանկանում յարմարվել իր միջավայրին: Եւ միջավայրը կուլ է տալիս նրան: Այդին մարդիկ միայն մի ղեկը ունեն—ճշմարտութիւնը, իսկ ստոր արարածները զինված են ուրիշ միջոց և դուրս ամեն տեսակ զէնքերով: Գաղափարով դուռ գիտութեան և վերջինիս առաջադրանքներն համար փայլուն փորձեր անելով, ինչպիսիս պրոֆեսոր Բեռտեօրով, ըստ երևցի թին իր ամբողջ գիտական շրջանում առանձին սիրտը և համակարգի առաջադր պիտի լինէր: Բայց, ընդհանրապէս, ճիշդ այդ ճանապարհը դարձնում է նրան առանձին ատելութեան և նախանձի առաքելայ: Անոթ լինելով դուռ գիտութեան մէջ վնասել Բեռտեօրովին, նրա թշնամիները, թշնամիներ, որոնցից ոչ մէկին նա ոչ մի վնաս չէ հասցրել,—վնասում են նրան մարդկային թող կողմից, ձգտում են արտա գցել նրա ընտանեկան կեանքի վրա և խորտակել նրան... Եւ համարում են իրանց նպատակին: Բեռտեօրով, հակառակ իր համոզմունքի, ստիպված է լինում ընդունել միտնաբարոյական հրաւերը և մահացու վերջ է ստանում: Բայց վերջին շնորհը վիշելիս, իրեն կտակ, նա դէպի լոյս և դէպի սրտի մարդութիւն է հրաւիրում չընդատողներին: Սրանցից լսվում է նոյն մուսայ, յուսահատական շոտան, որով ներշնչված են այժմ ուսու մտքի լաւագոյն ներկայացուցիչները, երկերը: Գեղարուեստական տեսակէտից դրանում խոշոր պակասութիւններ ունի: Գրախոսը ընտրութիւնը պատկ է բերում պ. Պատարագին, այդ օրվայ բնեկեցիկանով, ճաշակին: Մենք յուսով ենք, որ անմիտ պիկները կամաց-կամաց կանխեանան հայկական բնույթի բեկբարտարից: Գերադասելի կատարում էր Բեռտեօրովի դերը և խաղացած մտածած կերպով, միայն, մեր կարծիքով, ընդհանուր տոնը սխալ էր: Բեռտեօրովին այն տեսակ անձնատրուութիւններից է, որոնց ընտրութեան մէջ, հետեւաբար և շարժումներն ու խօսակցութեան մէջ միշտ նկատվում է դպրիկ լրջութիւն (СОММ-

ված ու պատրաստ մարդ կը հանեն հիւսիսի մեծ թաղաւորի համար: Մեծ, համարեա անհնարին թիւ էր. ծերերն էլ պիտի գէշը վերցնէին, իսկ երբ խոստումը կատարելու ժամանակը: Բայց ժողովուրդը, որ լուռ էր այդ մասին, դժգոհութիւն չէր գիտէր. նա արձաններ էր մղթում, Աստուծու օգնութիւնը հայցելով: Աւտոյ օրեր էին: Սարերի ձիւնը ձեղքելով, մարդիկ գնում էին սուրբերի մօտ, մատաղ էին անում. վերջին անօգնական այրին էլ չէր խնայում իր աքաղաղ... Տասն և վեց օր Լարաբաղը ամբողջովին խրնդուածք, յոյս ու ծիծաղ էր դարձել:

Վերջին հրաժեշտը տեղի ունեցաւ Սպիտակ Խաչ վանքում: Կարծես Վարդապետ էր, հաւաքվել էր անապին բազմութիւն: Պատարագում էր Մինաս վարդապետը: Յանկարծ ընդմիջվեց ժամանացութիւնը. պատարագիչը մի ձեռքով բռնեց խաչը, միւս ձեռքն առաւ դաւաճանը և դարձաւ դէպի ժողովուրդը: Ամենքը չընկել, եկեղեցում տեղիք մուկային լուսութիւն:

—Յրանք սպառնալիքներն որովհետեւ նրանք կը մխթարվին, արտասանեց վարդապետը մի խրքով, որոտացող ձայնով: Եւ նա մխթարում է ամենքին. մխթարում է Գրիստովի եկեղեցին, որ պիտի վերցնէ սգի քօղը, մխթարում է միւսին ու փղթերն, իշխանին ու ռաբինին, բոլոր մարդկանց, որոնք արտասանք են թափել, որքանց են իրանց գերութեան օրերը: Նա պարզ չէ

ԽՈՇԵ): Նա իսկական դիտական է և վերին աստիճանի բարոյական մարդ: Պ. Պատարագին նրան ներկայացրեց իրեն սովորական դիւրագոյաց խոսքիցէնտ մարդ: Դալով խաղի մասնաւոր կէտերին, պիտի նկատենք, որ դերասանը խիստ դրամատիկական վայրկեաններին, զգաւորապէս հողեկան յուզմունքներ ժամանակ, միշտ դիմում է արագախօսութեան. դա հողեքանօրէն յայտնի չափով ճիշդ է, բայց ոչ միշտ, և ոչ ամեն տիպի վերաբերմամբ: Տիկին Սիրանուշ Բեռտեօրովին կողմնադէմ դերը խաղաց անողութեամբ: Անգոյնութեան կողմից նոյն տեսակ դերում լաւ էր օրերը Վարդիթերը (Վարդապետ Տալինով): Մեր կարծիքով, որքան այդ դերասանուհին խոր թափանցի իր դերի միտքը և վստահ լինի իր ընդունակութիւնների, քան թէ դերասանական արտաքին ձևերի վրա, այնքան այնու կը խաղայ: Պ. Արեւիկան՝ Սիրանուշի դերում լաւ տպաւորութիւն էր թողնում: Պ. Յարութիւնի հետ իր խաղը ձայնեցիւ. դերում չափազանց չինծու էր:

ՆԱՄԱԿ ՇՈՒՆՈՒՑ

Փետրվարի 1-ին

«Ո՛վ հաւատաց» և նրանից մամուլի մէջ առաջացած պոլեմիկայից յետոյ՝ մեր կարծիքով աւելորդ կը լինէր վերադառնալ քանադական հարցին, այն միջոցներին, թէ գէթ այժմ ինչպէս ազատվել տղէտ քանադականից... բայց ընթացիկ կեանքը դժբաղդաբար կրկին յիշեցնում է մեզ այդ հարցը:

Շուշու Ազուլեայ եկեղեցում այժմ քանադապարծում են 4 հոգի (ծխականներ թիւը մօտ 600): Նրանք այդ թիւը միաբան քանադականներ բաւական չեն համարում և այժմ ուղում են իրանց մէջ մտնելու հինգերորդին, հարկաւ այն պատահաւոր, որ այդ «սուրբ» ձեռքերով կրակից չազանակ հանեն, որովհետեւ, մենք դրականապէս յայտնում ենք, որ նորեկին նրանք հաւասար ընկերակից չեն անի:

Ազուլեայի քաղաքացիներից մէկը այժմ չըբեցնում է ժողովրդի մէջ մի ստորագրութիւն այդ հինգերորդի համար, որի դէպ ասած, իր պրօտեկէն է և հանգուցեալ Այվադեան եպիսկոպոսի ձեռնադրած զահերից մէկն է, զահեր, որոնք ձեռնադրվելու ժամանակ չեն իմացել թէ հօտ կուրենաւ ապաշտարան, թէ ոչ: Ասել չի ուղի, որ ստորագրութեան թիւը «խաթմիւն» չուտով կը ծածկվի ստորագրութիւններով և այսօր վաղը մեր շրջանին կը կապեն մի անարժանին ևս: Լըսում ենք, որ ժողովրդականները մէկի յայտնած կարծիքին՝ ծխականներից ժողով գումարել և հարցը այնտեղ ընելի, միաբան քանադականներից մէկը սպառնացել է, թէ պոլեմիկայի միջոցով կը ցրվի ժողովը: Գիտարանում ենք հաւատալ. հազիւ թէ սպառնել է այդ տեսակ քաջութիւն եկեղեցու պաշտօնեայից, իսկ կատարվող երեւոյթի վրա դարձնում ենք հողեքան իշխանութեան ուշադրութիւնը:

Պետրոս Զաքարեան

ՆԱՄԱԿՆԵՐ ԽՅԱՐԱԳՈՒԹԵԱՆ
(Հեռադիւնեկով)

Օրդուեալ, փետրվարի 4-ին

Մեղրիի կանանց և երիտասարդների կողմից՝ սրտազին ողջնում են ամբիւն և գաղափարապատմում, թէ ինչպէս է եկել այս մխթարութեան օրը. գիտէ որ իր առջև չըքած ժողովուրդը գաղափար չէ կարող պահել. բայց նրա խօսքերը թափվում են յորդ ներքին նման, յոյս են տալիս, կրակ են դնում սրտերի մէջ: Նա օրհնում է քրիստոնեայ թագաւորին, որ իր գահի վրա բազմեցել է սէր, արդարութիւն, որ տեսնում է տանջվողներին և ունի նրանց համար ազուտ, ուժով խօսք: Գրիստովի Աստուծո խօսքն է նրա բերանով և ասում է. «Այս ես կը քարդեմ ձեր չղթները, ինչպէս գաւազանի մի հաւրածով քարվում են բոլորի ամանները, և դուք կը տեսնեք, որ ես Աստուծո եմ, չեմ մոռացել ձեզ: Նա անդառնալի պատգամ է: Եւ անա Աստուծու սպասուորդ տալիս է ազատ օրերի ողջին: Նա օրհնում է ազատ արօրը, որ Աստուծու անունով դուրս է գալիս հողը հերկելու և դիտել, որ իր աշխատանքը իրան է պատկանում. օրհնում է օրօրացը, որի մէջ ազատ երկիւն է փաթեթված, օրհնում է և դազակը, որի մէջ պատկան է խաղող ու ազատ մարդը. օրհնում է հարսներին ու աղջիկներին, որոնց յայտնի չէ մարդանման դայիքի աչք. օրհնում է երկրի, որ այլ ևս չէ ծծում իր սպասուոր մշակի արիւնը, օրհնում է բնակներն ու դաշտերը, որոնց սիրտը համար մարդիկ չեն տանջվում, չեն կոտորվում. օրհնում է նոր օրը, օրհնում է մի հաւատացող, սպասող ժողովրդի պատրաստու-

կան «Մշակի» ամենօրեայ հրատարակութիւնը, և ցանկանում եւսանդ և անապաւ. գործունէութիւն, Յովհաննէս Դանիէլեանց

Բալախանի, փետրվարի 1-ին
Շնորհաւորում ենք «Մշակի» ամենօրեայ հրատարակութիւնը: Կեցցէ «Մշակը»:
Մերայոյ Ստեփանեան, Յովհաննէս Բօղիկեան, Մէլքիշէ Նուպեան, Մարտիրոս Մալիբեան, Գրիգոր Մատուրեան, Մկրտիչ Սահակեանց:

Վաղդիկավազ, յունվարի 31-ին
Անկեղծօրէն շնորհաւորում ենք «Մշակի» 25-ամեակը. ողջնում ենք նրա ամենօրեայ հրատարակութիւնը:

Աւթանդիկեանց, Խանադատեան (Պատով)

Թիֆլիս, յունվարի 28-ին
Թող տուէք երիտասարդներին՝ բաղաւոր համարել մեզ, որ կարողանում ենք շնորհաւորել աման Գրիգոր Արծրունու հիմնած «Մշակ» լրագրի 25-ամեակը: Մենք այժմ մեզ երջանիկ ենք համարում, որովհետեւ տեսնում ենք ամենքին ցանկալի «Մշակի» ամենօրեայ դառնալը: Հնձիւր, սիրելի «Մշակ», այն պտուղները, որոնց սերունդը ցանկը եւ 25 երկար տարիներ: Ցանկանում ենք յարատւելիւն, այժմ ու եւսանդ, որ կարողանաւ առանց արդիւնքի կրել այն ծանր դրօշակը, որի ձակաւորն գրված է «Մշակ» քաղցր խօսքը:
Հմայեակ Տէր-Մատթէոսեան, Յովհաննէս Դաւիթեան, Ալեքսանդր Մ. Մկրտիչեան, Նելա Յակոբեանց, Ս. Բաղդիկեանց, Կերոյ Թաթէոսեանց, Յակովբ Օսանեանց, Դիկոպապո Մուրադկանեանց, Ալեքսանդր Մուրադկանեանց, Թորոս Թորոսեանց, Արտաշէս Վարդաշեանց, Արտաշէս Վազարեանց:

Բազու, յունվարի 29-ին
Բերկրութեամբ և բուռն ոգևորութեամբ ողջունում ենք «Մշակի» ամենօրեայ ցանկալի հրատարակութիւնը: Բայց որ է մեզ տեսնել «Մշակի» և նրա անթիւ համակրողներին փափաքած ինչք իրագործված: Կեցցէ հայոց մամուլի այն փայլուն օրդանը, որի նշանաբանն է, անխնայ մաքառել խաղաղ և տգիտութեան դէմ, սիրելով գիտութիւն և լոյս, ծառայել եկեղեցու իսկական շահերին, անվախ մերկայանալ ազգային և հասարակական թերութիւնները, բարձր պահել սպասարկական խօսքի սուրբ նշանակութիւնը: Կեցցէ և հազար կեցցէ այն ճաճանաչաւոր դրօշակը, որի ձակաւորն դրօշակած է աման հիմնադր, քանդաւարաւոր հրապարակախօս Գրիգոր Արծրունու անունը:
Խ. Օսանեան, Կ. Տէր-Յովհաննիսեան, Ար. Շնորհաւորեանց, Հ. Մէլքումեան, Մ. Աւագեան, Յ. Խաչիկեանց, Հ. Մէլք-Գրիգորեան, Թ. Գ. Յովսէփեանց, Դ. Կերոյեան, Ս. Գարահանեան, Ար. Պապովեան, Ար. Աւետեան, Ար. Պարոնեանց, Ա. Սերեբրասկեան, Գր. Սաղեան, Կ. Տէր-Ներսէսեանց, Գ. Մէլք-Վաղարշեանց, Եփրեմ Ստեփանեան, Մուսթ Մէլք-Յարութիւնեան, օր. Յատմիկ Մալխասեան, օր. Լևոնդիկ Պապեան, օր. Խիթիսեանց, Սահակ Միրզայեան:

Վրդ-Արվազ, յունվարի 30-ին
Վրդ-Արվազի պանդուխտ հայ երիտասարդներն ողջունում ենք ամբիւն «Մշակի» ամենօրեայ հրատարակութիւնը և ցանկանում ենք յարատւելութիւնը երկար տարիներ անշեղ առաջ գնալու այն ուղղութեամբ, որ դժել է աման Գրիգոր Արծրունին: Կեցցէ «Մշակը», կեցցէ այն լուսաւոր դրօշակը, որ 25 ձիւ տարիներ կուլ է տգիտութեան և խաղաղի դէմ և պիտի կուլ յանուն ճշմարտութեան ու անուղիւնեան:

Ս. Հարապետեանց, Գրիգոր Գաղափարեանց, Համբարձում Տէր-Ղուկասեանց, Լևոն Խոսրովեանց, Գրիգոր Ամիրանեանց, Ա. Գրիգորեանց, Տ. Տաքարեանց:

Թիւրքիս, յունվարի 28-ին
Մեր խաղաղ և անապաւ հրատարակութիւնը, որ վաղը երկրի տէրը կը դառնայ: Ապա վարդապետ անցնում է հերթին, նրանց, որոնք ինչպիսիք զնացել են: Օրհնում է բոլոր տառապալակ խօղորները, բոլոր յայտնի և անյայտ նահատակներին, որոնք տանջվել են, բայց անձնատուր չեն եղել, մեռել են, բայց արդարութիւն են կանչել: Վերջացնելով անցեալը, նա դիմում է ապագային և յորդորում է պիտի ու անյողաղը լինել: Աշխատենք, եղբայրներ: Ինչ հրաշալի եղանակով է նա ասում այս խօսքերը և քանի անգամ է կրկնում: Աշխատենք, աշխատաւոր Աստուծու օրհնութեան տակ է: Պատրաստ լինե՛ք Աւետարանի իմաստուն կոյտերի նման. չը ընե՛ք, երբ կը դառնա, երբ մեզ կը կանչեն, թող վառ լինին մեր ճրագները և պատրաստ մեր հողիները գնալու այնտեղ, ուր Աստուծու գործն է սպասում: Եւ բարձրացնելով խաչը, նա խաչակնքում է ալ ու ձախ, աջողութիւն է մաղթում մեծին ու փոքրին, թողլին և ուժեղին...

Սրելիկ սպվում են երգերը, բայց եկեղեցում մարդ չը կայ, որի աչքերը թաց չը լինեն: Ձայն, հաւաչանք չունեն այդ արտաստեղծները, որովհետեւ յուսահատութեան, վշտի արտաստեղծներ չէին:

(Կը շարունակվի)

